

891.995

G-15



30 MAY 2011

ԼՄՄԱՆՈՒՆ ԳԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՈՏԱՆԱԻՈՐՆ ԵՐ

(ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



15 ՊԱՏԿԵՐՈՎ

ՄՈՍԿՈՒԱ - 1903

891.99տ. 2-03

Գ-15 5

ստ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

№: 8953

ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

(ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Գիրքը մի ծառ՝ վրան կեռաս,
Երբ որ ձեռքդ առնես կարդաս,
Միայն տերեւ՝ մի շրջեր,—
Նայէ՛ պտղին համը տեսնաս:
Գաբր. Եպիսկ. Այվազեան:

15 ՊԱՏԿԵՐՈՎ



ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1903.

253.128
2

1001
2849

10 JUL 2013

81711

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 15 Юля 1902 года.

Типографія Х. Вархударянъ, Срѣтенка, Мясной пер., д. Бѣльева.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ


Երեխայական գրքոյկների մի բաական զգալի պակասութիւն է նկատուում մեզնում վերջին տարիներս: Կամենալով ուժերիս ներածի չափ բաւարարութիւն տալ այդ ամենակարևոր պահանջին՝ ես մտածեցի մի փոքրիկ բան գրել մեր երեխաների համար: Եւ, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ յանգաւոր գրուածքները աւելի սիրով են կարդացվում, քան անյանգները՝ ես, իբրեւ փորձ՝ վճռեցի մի - երկու ոտանաւոր գրել, առանց, սակայն, մեր բանաստեղծների շարքը խտացնելու յաւանութիւնն ունենալու: Պէտք է աւելացնեմ մի և նոյն ժամանակ, որ այս առաջին անգամ, ինձնից անկախ պատճառներով, չկարողացայ առանձին ուշք դարձնել գրքոյկի շքեղութեան վրայ:

Ինչ վերաբերում է առաջարկած նիւթերիս յարմարաւոր ու շահեկան լինելուն կամ չլինելուն՝ դրա մասին իրանք գրածներս կխօսեն: Այսքանը միայն կաւելացնեմ, որ ցանկանալով մի փոքրիկ ծառայութիւն անել մեր փոքրիկ կարդացողներին՝ ես մի և նոյն ժամանակ տալիս եմ նրանց և՛ մի քանի «ուղղագրական», հեշտ ըմբռնելի «կանոններ»:

4 «պրիլ» 1902.


Մօսկվա.

Է. ք. Ն.



ԻՄ ԽԵԼՈՔ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐ՝

ՏՂԱՆԵՐ ՈՒ ԱՂԶԻԿՆԵՐ,



Եր քաղաքներում ու գիւղերում գեղեցիկ ու լաւ-լաւ բաներ շատ կան: Նրբանցից մի քանիսը ինքներդ էլ տեսած կամ լսած կլինէք: Բայց գիրք կարդալու պէս լաւ բան չկայ: Գիրքը մեր ամենալաւ ընկերն է, որովհետեւ միշտ

մեզ հետ է, և սրտներին ուղած ժամանակը հետներս խօսում է: Բաւական է, որ մօտենանք նրան ու երեսը բաց անենք՝ իսկոյն կսկսի խօսել:

Նա մի և նոյն ժամանակ մեր ամենալաւ բարեկամն է: Պարապ ենք լինում՝ մեզ զբաղեցնում է, բան չենք գիտենում՝ հասկացնում է, մոռացած ենք լինում՝ յիշեցնում է, տխուր ենք լինում՝ ուրախացնում է: Շատ անգամ էլ այնպիսի սիրտ կտրատող բաներ է պատմում, որ լացեցնում է մեզ: Բայց մենք այդ լացից էլ ենք շնորհակալ լինում:

Այդ բաները մտածելով՝ ես էլ ահա մի փոքրիկ բան եմ գրել ու գրել ձեր առաջը: Կարդացէ՛ք ուշադրութեամբ: Կարելի է, գրածներն մէջ մի այնպիսի բան գտնէք, որ ձեզ օգնւտ տայ: Եւ եթէ, ի՞նչ նոր բան որ սովորէք, սիրէք այն, ու մի թանկագին բանի պէս պի՛նդ պահպանէք, հաւատացէ՛ք որ միշտ շնորհակալ կլինէք:



ՆԻԻԹԵՐԻ ՅԱՆՎԸ

I. Կ Ա Ր Դ Ա Լ ՈՒ Բ Ա Ն Ե Ր

	Երես.
1. Սիրած - չսիրած բաներ	9
2. Ի՞նչը ի՞նչ արեց	12
3. Ո՛ր ամսին ի՞նչ տօն ունենք	14
4. Մեր մեծ տօները	17
5. Ի՞նչն է լաւ	22
6. Ի՞մ աղօթքը	25
7. Առանց մօր	26
8. Մայր ու մանուկ	28
9. Մեծ - մայր	30
10. Ի՞նչն է վատ	32
11. Կարգ ու կանոն	35
12. Աստծու անէծքը	37
13. Մեր պարտքը	41
14. Մեծ - մօր օրհնանքը	44
15. Լեզու	46
16. Ուղղախօսութիւն	49


II. Գ Ր Ե Լ ՈՒ Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր.

17. Ուղղագրութիւն	51
18. Նոյնահնչիւն բառեր	55
19. Ռ Է Ր (նման բառերի մէջ)	57
20. «Ռ» ունեցող բառեր	59
21. Փոքրիկ աղջիկ	61

ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

II. ԿԱՐԴԱՆՈՒ ԲԱՆԵՐ



1. ՍԻՐԱՆԻ - ՉՍԻՐԱՆԻ ԲԱՆԵՐ

«ՍԻՐԱՆԻ ԵՄ ԼՂՍՈՒ ՄԵԼ,
ՈՐ ՎԱՌՎՈՒՄ Է ԻՄ ՎԵՐԵ.
ՆԱՆ Է ՄԱՐԻՍ ԱՅՔԻՍ ԼՂՍՈՒ,
ՏԱՐԻՍ Է ԼՂՂ ԿԵԱՆՔԻ ԼՂՍՈՒ»

ԵՍ ՍԻՐԱՆԻ ԵՄ ԼՂՍՈՒՄԻ
ՎԱՌ ԼՂԱԿԱՆԵՐԸ ԲՈՂՈՐԱԿ.
ԼՂՍՈՒՆ—ՎԻՂԵՐ ՄԻՂՍՈՒ ԱՄԱՌ
ՑԵՐԵԿ Է ՈՂՁ ՄԵՐ ԱՂԽԱՐՀ:

Ես սիրում եմ և՛ աստղեր՝
Մանր պէծ-պէծ այն կայծեր.
Փայլփլում են, պսպղում
Ամենքն իրանց միշտ տեղում:

Անձրեն էլ եմ սիրում շատ՝
Սար ու ձոր է ծաղկեցնում.
Կաթիլներով իր առատ՝
Հացով, իւղով լիացնում:

Սիրում եմ և՛ ծիածան՝
Կանաչ-կարմիր, զանազան.
Անձրեից յետ երկնքում
Կամարի պէս է ձգվում:

Սիրում եմ ես փուխը ձիւն՝
Փայլուն, տաքուկ, լայն վերմակ,
Որ տալիս է քաղցր քուն
Ցանած սերմին և հասակ:

Ես չեմ սիրում սառ կարկուտ՝
Երկնից թափվող գնդակներ.
Փշում են տան լուսամուտ,
Զարգում ծառեր, պտուղներ:

Չեմ սիրում ես ցուրտ քամին,
Քշող, տանջող ամպերին.
Փռով աշխարհ ողջ լցնում,
Մարդու աչքեր կուրացնում:

Հուսին, աստղեր ու արև,
Ձիւն, ծիածան ու անձրե՝
Ապրեն բոլոր միշտ տարին,
Կորչեն կարկուտն ու քամին:





2. ԻՆՁՐ ԻՆՉ ԱՐԵՑ

Կաւ դարուն, մեզ բերեց
Պայծառ ու պարզ, մեղմ օրեր,
Եւ դաշտերին նա տըւեց
Ինչ որ ունէր՝ լաւ բաներ։—

Փունջ մանուշակ գիժ մարտին,
Կոկոն, տերեւ, ապրիլին,
Հոտոտ վարդեր մայիսին՝
Լցրեց պարտէզն ու այգին։

Եկաւ ամառ՝ շոգ — կըրակ
Օրեր բերեց մեզ համար,
Հետն էլ ջրեր սառնորակ,
Մրգեր անթիւ, անհամար։—

Կանաչ վարունկ յունիսին,
Մեծ ձմերուկ յուլիսին,
Օգոստոսին՝ դեղձ, խաղող՝
Կանչում իրանց միշտ քաղող։

Եկաւ աշուն հով ու զով,
Մերկացրեց դաշտ, այգի.
Լցրեց տարվայ պաշարով,
Փառաւորեց սիրտ հոգի։

Սեպտեմբերը մեզ տըւեց
Մերկէիլ ու մեղրոտ թուզ՝
Հոկտեմբերն ու նոյեմբեր՝
Կարմիր գինի և ընկուզ։

Եկաւ ձմեռ ու բերեց
Ցուրտ ու սառուց, մութ օրեր,
Կտուր ու բակ նա լցրեց
Աչք կուրացնող ձեան շեղջեր։

Դեկտեմբերը բրդում է
Բամպակի պէս քուլաներ.
Յունի վարն ու կարճ փետրվար՝
Նախշում տան լուսամուտներ։

3. ՈՐ ԱՄՍԻՆ ԻՆՉ ՏՕՆ ՈՒՆԵՆՔ



ունվարին մենք ունենք
Ծնունդ,
Փետրվարին՝ Տաճար —
Գալուստ,
Մարտը բերում մեզ
սուրբ Զատիկ,

Հետո էլ՝ մի թունդ նաւակատիք^{*)}:

^{*)} Մենք տօների նախընթաց երեկոներին հայերս մսեղէն կերակուր չենք ուտում: Սյդպիսի երեկոն ասվում է նաւակատիք: Տարվայ մէջ ունենք հինգ նաւակատիք, այն է՝ Զրօրհնէքի, Զատիկի, Վարդավառի, Վերափոխման և Ս. Խաչի:

Ապրիլին մեզ մեծ Աւետում,
Մայիս՝ երկինք վեր համբարձում:
Յունիսը մեզ բերում վերուստ
Շնորհք բաժնող հոգու Գալուստ:

Յուլիսը միշտ փայլուն, պայծառ՝
Բերում է մեզ սուրբ Վարդավառ.
Օգոստոսը՝ վեր երկնքում —
Մաքուր Կոյսի Վերափոխում:

Սեպտեմբերը՝ Կոյսի ծնունդ,
Հոկտեմբերը չունի սերունդ.
Նոյեմբերը՝ Կոյս ընծայում
Երեք ամաց՝ սուրբ տաճարում:



Մեր եկեղեցական տոները միշտ մի և նոյն ժամանակ
չեն տօնվում: Նրանցից մի քանիսը ամէն տարի տօնվում
են մի և նոյն ամսին ու ամսամիջին, և ասվում են անշարժ
տոներ: Մի քանիսն էլ տօնվում են յետ ու առաջ, ու-
րիշ-ուրիշ ժամանակ, և ասվում են շարժական տոներ:
Զատիկը գլխաւոր շարժական տօնն է: Զատիկին նայելով՝
փոխվում են և՛ միւս շարժական տոները:

ԱՆՇԱՐԺ ՏՕՆԵՐԸ.

1. Քրիստոսի Մնունդը
2. Քրիստոսի Մկրտութիւնը
3. Քրիստոսի Անուանակոչութիւնը—յունվարի 13.
4. Քրիստոսի Քառասնօրեայ՝ տաճար—գալուստը (Տեա-
ռըն ընդառաջ)—փետրվարի 14.
5. Աստուածածնի Աւետումը—ապրիլի 7.
6. Աստուածածնի Մնունդը—սեպտեմբերի 8.
7. Աստուածածնի Ընծայումը տաճարին—նոյեմբերի 21.
8. Աստուածածնի Յղութիւնը Աննայից—դեկտեմբերի 9.

ՇԱՐՇԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ.

1. Քրիստոսի Յարութիւնը (Զատիկը) — մարտի 22 - ից
մինչև ապրիլի 25 (մէկից վաղ, միւսից ուշ՝ Զատիկ
չի՛ լինի.)
2. Քրիստոսի Համբարձումը—ապրիլի 30—յունիսի 3.
3. Ս. Հոգու Գալուստը—մայիսի 10—յունիսի 13.
4. Քրիստոսի Պայծառակերպութիւնը (Վարդավառ)—
յունիսի 28—օգոստոսի 1.
5. Աստուածածնի Վերափոխումը—օգոստոսի 12—18.
6. Ս. Խաչ (Խաչվերաց)—սեպտեմբերի 11—17.



4. ՄԵՐ ՄԵԾ ՏՕՆԵՐԸ

աթախման մեծ, ուրախ օրին՝
Ժամաշապիկ ձեռք բերելով,
Դուռ ծեծելով կէս-գիշերին՝
Ման ենք զալիս «Խորհուրդ մեծ»-ով:

Ջրօրհնէքին ջուր ենք օրհնում,
Կանաչ մեռն կաթած ջրից՝
Շիշ-ամանով տուն ենք տանում,
Աղաչելով տէր, տիրացուից:



Երբ Սուրբ Սարգիս ենք մենք տօնում,
Ծով ենք պահում ամբողջ հինգ օր,
Մեղրաշաղախ փոխինտ ուտում,
Քաղցրացնում մեր բերան բոլոր:

* * *

Գալիս է շուտ Տէր ընդ առաջ,
Տան բակերում խոտ ենք դիզում,
Վառած մոմեր առնում քաջ-քաջ՝
Եկեղեցուց տուն ենք տանում:

Ամբողջ բակը փայլ-փլում է
Խոտ ու ցախի առատ բոցից,
Եւ անդադար՝ ո՛վ ուզում է,
Լոք է տալիս*) ամէն կողմից:

* * *

Լուսաւորչին սուրբ բեմը բաց՝
Լոյս Յիսուսն է վերան բաղմած.
Գրիգոր պապի թոռներ, ծոռներ
Լի են ժամի մէջն ու դռներ:

*) Վրայովը թռչում է:

Ծաղկաղարդին, քնից ելած՝
Մեծ ու փոքրով ժամ ենք շտապում,
Ասում են թէ՛ Քրիստոս Աստուած
Երուսաղէմ փառքով մտնում:

Ոսքերի տակ հին հրէաներ
Ծառերի ճիւղ, ոտտ'ին փռում,
Մենք ուռենիք և մեր սրտեր,
Մեր անձ, մեր գանձն ենք նւիրում:

Փարիսեցիք*) չար նախանձով
Փուշ պատրաստում, խաչ են անկում,
Մենք այն խաչին զլուխ տալով՝
Հոգով, սրտով ծունկ խոնարհում:

* * *

Հին գշաբթի օր, անունն Սւադ,**)
Քահանաներ, կանգնած բեմում՝

*) «Փարիսեցի» ասում էին այն հրէաներին, որոնք մի-միայն Մօսէս մարգարէին էին մարգարէ ընդունում: Գա-ռասէր ու փողասէր մարդիկ էին, և դրսից լաւ, բարի ու սուրբ երեւալով՝ ուրիշներից փողեր էին գջլում: Մեզնում փարիսեցի անուանում են «կեղծաւոր» մարդուն, որ ուրիշ-ներին այնպէս է ցոյց տալիս, թէ ինքը շատ լաւ, բարե-պաշտ ու հաւատացող մարդ է:

**) Մեծ-պատի վերջին կամ եօթներորդ շաբաթը

Սուրբ Հանդեսով օրհնում կարադ,
Տեսնողների խելքը տանում:

Շարականի մեղմ ձայնի տակ
Աւագ տէր-Հայր ծունկ է չոքում,
Ծառայի պէս՝ կապած ղենջակ՝
Մեծ ու փոքրի ոտք լվանում:

* * *

Ահա եկաւ և՛ մեծ Զատիկ,
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»,
Խնդում, ջնճում բոլոր մարդիկ,
Տղերք առած՝ վաղում փողոց:

Այստեղ փոքրեր, այնտեղ մեծեր՝
Կարմիր հաւկիթ միշտ կոտրատում,
«Մա՛, մէ՛» ձայնով փափլիկ դառներ
Երկինք, երկիր զղբոցեցնում:

* * *

Քրիստոսի մատնութեան, չարչարանքի, խաչվելու, թաղ-
վելու և յարութիւն առնելու շաբաթն է: Այս պատճա-
ռով այդ շաբաթվայ ամէն օրը մեծ օր է, կամ ուրիշ
խօսքով՝ աւագ օր է: Ասում ենք աւագ երկուշաբթի, աւագ
երեքշաբթի, աւագ չորեքշաբթի, աւագ հինգշաբթի, ա-
ւագ ուրբաթ, աւագ շաբաթ, Զատիկ:

Զօրհնէք, Զատիկ՝ քահանաներ,
Շուրջառ առած՝ տուն են օրհնում:
Մի կողմից էլ գերեզմաններ
Խնկան անուշ հոտ են բուրում:


Հարուստ մեռի ոտ ու գլխում
Տէր, տիրացու, ուրախ կանգնած՝
Սուրբ երգեր են կըլ-կըլացնում՝ *)
Ղարիբ մեռել անտէր թողած:

Ղարիբ մեռել, հողէ՛դ զուրբան, **)
Աղօթք արա, ես մեծանամ:
Մուշեց, Վանից — ի՛նչ մեռել կան՝
Գերեզմանիդ օրհնել պիտ՝ տամ:



*) Ուրախ երգում:

**) Հողէ՛դ մեռնեմ:



5. ԻՆՉՆ Է ԼԱԻ

ռաւօտը, հով ժամանակ,
Ամառ լինի կամ թէ գարուն,
Խեղճող օդից դուրս գաս մենակ,
Սարեր, դաշտեր ման գաս սիրուն:

Ոտքիդ տակը՝ կանաչ գորգեր,
Գլխիդ վերև՝ կապոյտ կամար,
Իսկ չորս կողմի՝ երգող ծառեր,—
Ի՞նչ արժէ սա մարդուս համար:

Այստեղ ծաղիկ, այնտեղ տերև,
Բոլորն էլ քեզ զլուխ խոնարհած՝
Խնդում են և տալիս բարև,
Խելք ու միտքդ յափշտակած:

Թուփ ու ճառի ոտքերի տակ
Ձայն ես լսում, ետև նայում,—
Պաղ աղբիւրի ալեակ, կոհակ
Գլխովի՛նք՝ ցած են թափվում:

Ի՞նչպէս մարդուս ներսի կողմում
Այդ զընդ-զընգոց ու քնքշիկ ձայն
Սիրտ, հոգի է փառաւորում
Եւ նորոգում միանգամայն:

Ըզգում ես որ դու չե՛ս մենակ,
Այլ քո շուրջը ամէն մի ծառ,
Աղբիւր, թուփ, խոտ և մանուշակ,
Թռչուն, թիթեռ, կարճիկ մայառ,—

Լեզու առած՝ ձայն են տալիս,
Ականջիդ տակ խօսում մեղմիկ,
Եւ ամէն տեղ, ողջունելիս,
Խօսքեր ասում՝ սրտիդ մօտիկ:

Այո՛, նրանք լեզու ունեն,
 Աշխարհն ինքը մի բայ գիրք է.
 Նա՛ է խելօք, ով այբ ու բէն,
 Ով այդ գիրքը կարդալ զիտէ:



6. ԻՄ ԱՂՈԹՔԸ



Մեր ճայր, որ
 է՛ն բարձ-
 րունն ես,
 Մենք իրտեղ,
 Դու իրտեղ ես.
 Ի՛նչ որ ուղենք,
 խնդրենք Բեզ՝
 Դու ամէն բան
 Հասցրի՛ւ մեզ:—

Զմեռն ուղարկի՛ր փայտի դէզ,
 Երբ մերկ լինենք՝ ծածկի՛ր մեզ,
 Որ աչքն հրըս դարձնենք Բեզ,
 Փառք տանք, օրհնենք, երգենք Բեզ:

Ամառ գալիս անձրև տուր,
 Մեր արտերին հաստի տուր.
 Նեղ տեղ ընկնենք՝ Ա՛ջըդ տուր,
 Դու վերջ փռենք ամէն - ուր:





7. ԱՌԱՆՑ ՄՅՐ

Նչե՛ց է որ, անհուշ մայրիկ,
Երբ գնում ես ո՛ր և է տեղ,
Միշտ տրտմամբ է այս մեր տընիկ,
Քեզ փնտռում եմ ես ամէն տեղ:

Շատ անգամ ես լաց եմ լինում,
Թէպէտ արցունք չեմ է՛լ թափում.
Պատճառն ի՞նչ է, որ առանց քեզ,
Լուռ է մեր տուն՝ մեռելի պէս:

Իմ խաղերը և իմ գործեր
Թողնում եմ ու գնում, պառկում,
Մտքիս մէջը, ան, քո պատկեր
Հայելու պէս է նկարվում:

Այնուհետեւ ես համբում եմ
Րոպէները վերադարձիդ,
Եւ հէ՛նց որ քեզ նկատում եմ,
Փայլ եմ տեսնում վառ երեսիդ:

Եւ յետոյ մեր խաւար պատեր
Լոյս են առնում այդ երեսից,
Խաղըս յիշում և իմ գործեր
Ձեռք եմ առնում ես նոր - մէկից:





8. ՄԱՅՐ ՈՒ ՄԱՆՈՒԿ



Պօրակ դէմքիդ, այդ վառ աստղերիդ
Արեւ եւ գերի, սիրելի Արմիկ.
Ի՞նչ կայ մէջները, որ զարթած
Ժամիդ
Մոռնում է հոգսեր քո տէր, քո
մայրիկ:

Երբ դու բացում ես այդ պայծառ աչքեր,
Առաջին նայուածք ուղղում մայրիկիդ,
Զըւարթ ժպիտը և ուրախ զծել
Փռվում են խակոյն լուսին երեսիդ:

Ա՛խ, դու չգիտես՝ ի՞նչ եմ ես ըզգում
Սէյն իմ երջանիկ սուրբ բոպէներին.
Իմ կեանք ու բաղդը քո մէջ եմ տեսնում,
Դու զարկ ես տալիս սրտիս թիւերին:

Քեզ մօտ, քո կողքին, քեզնից անբաժան,
Քո մէջ, քեզ համար ապրում է քո մայր.
Թող տայ քեզ արեւ, փրկի ամէն ժամ
Չարից, փորձանքից սուրբ Աստուածամայր:





9. ՄԵԾ-ՄԱՅՐ

այրն էլ լաւն է,
մայրն էլ լաւն է,
Ո՛վ լաւը չէ՝
որդու համար.

Բայց մեծ-մայրը լաւի
լաւն է
Իր աչքի լոյս թողան
համար:

Այս պատճառով և մեր Աշոտ
Ձէ՛ հեռանում մեծ-մօր գրկից,

Որ առնում է իր ջերմ կարօտ՝
հաստեղով միշտ թօռնիկից:

Նա հերթով իր թռանիկներին
Մեծացնում է իր ձեռքի տակ,
Ինչպէս հաւը ձագուկներին
Առնում է իր թւերի տակ:

Երանի՜ քեզ, սիրուն Լուսիկ,
Մի մայր ունես, երկու մեծ-մայր.
Ձե՛մ տեսել ես ոչ մի հատիկ,
Ձե՛մ իմացել՝ ի՞նչ է մեծ-մայր:

Մի պատկեր կայ՝ մեր պատից կախ.
Մայրըս կասէ՝ «Ա՛յ քո մեծ-մայր»:
Երբ նայում եմ, տեսում եմ՝ «Ա՛խ,
Ի՞նչ կը լինէր, կենդանանայր»:





10. Ի՞նչն է վաճ

Մաւօտ վաղ մաքուր օդին,
Գարուն լինի կամ թէ ամառ,
Գլուխըդ դրած փափուկ բարձին՝
Խռմփացնում ես դու քեզ համար:

Թող աշխարհքը ոտքի՝ կանգնած՝
Ամէն մարդ իր դործին լինի.
Թող արեւը վեր բարձրացած՝
Խանձի, մրկի, ինչ պատահի.

Թող թռչնիկը սուր աղմուկով
Գլուխ տանի, ականջ ծակի,—

Միայն թէ քեզ ձայն տայ ո՛չ-ով՝
Խորը քունըդ անո՛ւշ լինի:

Բայց կակուղ բարձ, փափուկ ներքնակ,
Լաւ իմանա՛ս ցաւի բուն է.
Թթուած օդը, փակված սենեակ
Ո՛վ շատ սիրի՝ բանը բուրդ է*):

Մինչ ուրիշներ վաղուց հազած,
Դաս պատրաստած, նախաճաշած՝
Իրար ետքից շարան-շարան
Շտապում են դէպ՝ ուսումնարան,—

Դու ձգված ես տաք անկողնում,
Իսկ զրբերըդ անկիւններում՝
«Վայ» են տալիս՝ կուրծքները բայ,
«Տէ՛ր» են կանչում՝ աչքները թայ:

Ոսկի՝ է քո ամէն մի ժամ,
Կը զարթուս, բայց ո՛ւշ կը լինի.
Կը նստես դու անդորձ՝ անբան,
Լաց ու կոծը էլ չի՛ն օգնի:

*) Հիւանդոտ կդառնայ.

Ի՛նչ աղքատ իր բախտն է ողբում,
 էրնէ՛կ տալով անցած օրին.
 Ի՛նչ թշուառ մեծ փողոցներում
 Ձեռք է պարզում անցորդներին.

Ի՛նչ աւաղակ խուլ տեղերում
 Կողոպտում է ճամփորդներին,—
 Քեզ պէս անհոգ, ծոյլ են եղել,
 Պարապ, անգործ թըրե եկել:



11. ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ

աղա՛, ի՛նչքան ու-
 զում ես,
 Արա՛, ի՛նչ որ կամե-
 նաս.

Բայց թէ մի կարգ չը պահես,
 Ողորմելի կը մնաս:

Խաղ ու պարի հետ ընկած՝
 Թէ ժամերըդ չը համրես,
 Արեն արդէն մայր մտած՝
 Թէ դասերըդ նոր յիշես.

Թէ գիշերով չը կախես
Շորերըդ մի յայտնի տեղ,
Գիրք ու տետրեր մշտապէս
Թէ փրնտուես դու ամէն տեղ,

Այսօրվայ գործ թէ վաղվան
Թողնես, ասես՝ «Սա հեշտ է».
Դժուար, ծանր թէ մի բան
Անշարժ թողնես, —ի հարկէ,

Վաղն էլ ի՛ր «դարդ» կունենայ:
Բայց թէ «փուշը դու մէկ-մէկ
Հանես», գործը հեշտանայ՝
Ամենք կը տան քեզ «էրնէ՛կ»:

Խելօք մարդու թէ խօսքին
Լսես, կասէ՝ «Զճւր կանցնի
Կեանքի կէսից աւելին՝
Առանց կարգ ու կանոնի»:



12. ԱՍՏՈՒԻ ԱՆԷԾՔԸ



ստուած մարդուն երբ դուրս արեց,—
Կինն էլ հետը,—կանաչ դրախտից՝
Բացեց նա աչք և նկատեց,
Որ զրկվել է փառք ու պատուից:

Այնտեղ ամէն բան պատրաստ էր,
Հացի, փողի կարիք չը կար,
Դեռ Աստուած էլ իրանց հետ էր,
Ցաւից, պատժից երկիւղ չը կար:

Նա անխնայ, ասեց այսպէս.
«Հող էիր դու, էլ Հող դառնաս.
Քրտինք թափես, որ հաց ճարես,
Ազդ ու տակով տանջվես, տնքաս»:

Մարդ ու կնիկ դուրս գնացին,
«Ախ» արին փակ դռան ետեւ.
Վերջին անգամ ներս նայեցին,
Ձեռքները բան չընկաւ թէ:

Լաւ ղնենելով հեռու թէ մօտ՝
Աչք ածեցին իրանց բոլոր,—
Տեսան—աշխարհ՝ քարոտ, փշոտ՝
Արտասուեցին ոլոռ - ոլոռ *):

Մարդ ու կնիկ իրանց որդով,
Քար ու երկաթ բրիչ շինած՝
Դաշտ փորեցին դառ քրտինքով,
Տուն շինեցին՝ հալից ընկած:

Քաղց ու սովից շատ մաշվելով՝
Փուշ քաղեցին, հող վարեցին.

*) Ոլոռը սիսեռն է: Ոլոռ - ոլոռ արտասուել նշանա-

Առուակի սկէս քիրտ *) թափելով՝
Իրանց ապրուստ, հաց ճարեցին:

Գիշերները նրանք խաղաղ
Քուն ին մտնում, մտածելով՝
«Ի՞նչքան լաւ է՝ հովին վաղ - վաղ
Գործ շինելը մեր կոշտ ձեռքով»:

Իրանց անկած ծառի ստուերում
Երբ որ ուրախ նստում էին,
Աշխատանքի ստուղն ուտում,
Նախկին օրեր յիշում էին՝

Իմացան որ փափուկ մեր կեանք
Մեծ վնաս է հողուն, մարմնին,
Գործն ու ջանքն է և մարդու կամք՝
Մարդ շինողը ամէն մէկին:

Իրանց քիրտով ցօղված դաշտում
Այնուհետեւ սրտի խորքից

կում է՝ սիսեռի չափ արտասուքի մեծ - մեծ կաթիլներ
թափել:

*) Քրտինք:

Երգում էին ու գոհանում*)

Ինչպէս պատուից**), այնպէս պատժից***):

«Թէ որ Աստուած, այսքան—ասին—

Քաղցր ու համով է Քո անէծք՝

(Արժանանալք մենք այն օրին)

Ինչ կը լինի Քո սուրբ օրհանք»:



*) Շնորհակալութիւն անում:

**) Այն պատուից, որ ստանում էին դրախտում եղած ժամանակ:

***) Այն պատժից, որ ստացան՝ դրախտից դուրս իրանց քրտնքով հաց ճարելու համար:

13. ՄԵՐ ՊԱՐՏՔԸ



է ամէն մարդ մենակ ապրէր,

Կամ ամէն տուն լրի ի՛ր համար.

Մէկի մասին հոգ չը տանէր,

Այլ՝ սեփական զլիւի՛ համար.

Չօգնէր երբէք իր խեղճ եղբօր,

Համէր ոսկիք իր անհամար,—

Կը ջընջվէին մարդիկ բոլոր,

Կը վերջանար արար աշխարհ:

Կողքիդ դրացին չունի չոր հաց,

Սիրտը փակ է, աչքը՝ միշտ թաց.

Դու ուտում ես մեղը ու կարագ,

Նրան խրատում ծանր ու բարակ:

Գործ տուր, սիրտ տուր աշխատողին,

Խրատըդ պահի՛ր ծոյլի համար.

Ձեռք տուր, օգնի՛ր հասկացողին,

Ոտքի կանգնի, դանի պատառ:

Կարօտ մարդու ի՛նչ տալիս ես,
Թէ՛ փող, թէ՛ գործ զու քեզանից՝
Ողորմութիւն չպէ՛տք է կարծես,
Սյլ՝ քիչ-քիչով խլած նրանից:

Գիտեմ, որ զու կը զարմանաս
Իմ այս ասած խօսքի մասին.
Թող պատմե՛մ քեզ, որ հասկանաս,
Ի՛նչպէս մէկը զըկեց տասին:

Կար ժամանակ, բոլոր մարդիկ
Միատեսակ հարուստ էին.
Ունէին տուն, ամէն բարիք,
Ոչի՛նչ բանի կարօտ չէին:

Անցաւ քանի հարիւր տարի.
Ուժով, խելքով ո՛վ որ քաջ էր՝
Չուզեց ապրել մարդավարի,
Որովհետեւ միտքը ծուռն էր:

Հասաւ, ընկաւ միւսնորի վրայ,
Յափշտակեց, ի՛նչ ունէին,
Օր ցերեկով ու աշքարա,
Աղքատացիեց բոլորովին:

Հիմա, ի՛նչ որ մենք տալիս ենք
Խեղճի, որբի՝ մխալներով*),
Սյն է, ի՛նչ որ մենք խլել ենք
Սյն թոյլերից՝ տաս փութերով:

Երբ մի թշուառ մարդ դիմում է՝
Դէպ՝ քեզ պարզած անյոյս իր ձեռք,
Գիտցի՛ր՝ տալը միշտ քո պարտքն է,
Առնելը նրա՛ սուրբ իրաւունք:

Սյս է կեանքի ու մեր պարտքի
Ոսկի կանոն՝ ձմեռ, ամառ, —
«Մէկը ապրի միշտ անքեքի,
Ամենքը՝ միշտ մէկի՛ համար»:



*) Փութը ունի 40 ֆունտ. ֆունտը ունի 32 լօտ, լօտը՝
3 մխալ (զալանիկ, золотникъ):



14. ՄԵԾ-ՄՕՐ ՕՐՀՆԱՆՔԸ

Օրհնում եմ քեզ, Հայր դառնաս դու,
 Անդին Վահան, Հայ մեծանաս.
 Օրհնում, ինչպէս Թուան, որդու
 Հայր Աբրահամ: Պապիկ դառնաս:

Գիր, թուղթ սիրես,
 Գրիչ դառնաս.
 Լեզուդ սիրես,
 Վրճան դո՛ղաս:

Ամթ դէմքիդ
 Միշտ ունենաս.
 Խիղճը սրտիդ
 Մէջ ունենաս:

Տասը լեզու
 Թէկուղ սովըես,
 Քոնը ոսկու
 Հետ չը փոխես:

Կրճքիդ տակում
 «Ախ» չունենաս.
 Սրտիդ ծալքում
 Վախ չունենաս:

Ձեռքդ, ծոցդ
 Լի ունենաս.
 Տունդ, դուռդ
 Բաց ունենաս:

Դէ, քեզ տեսնեմ,
 Սիրուն տղաս.
 Ես քեզ օրհնեմ,
 Դու զօրանաս:





15. ԼԵՂՈՒ

շխարհումըս ամէն
բան
Ունի իր ձայն, իր
լեզուն,

Թէ՛ բանական, թէ՛ անբան
Եւ թէ՛ ամէն անասուն:

Ամէն աղբ էլ հէնց պսպէս՝
Ունի լեզու իր համար.
Ունի իր դոյն և իր ծէս,
Խօսք ու զրոյց շատ յարմար:

Թէ՛ դու աղբ ես, մէկ անուն,
Մի ձայն ունես քեզ համար.
Ունես լեզու և կանոն,
Խօսքեր, մտքեր անհամար՝

Ամէն տեղ և ամէն ժամ
Պէտք է յոյց տաս դու քո դոյն,
Եւ քո լեզուն՝ վարժ թէ խամ՝
Դուրս դայ, մոնի իր խոր բուն:


Քո այդ խօսքերն ու լեզուն
Մօրըդ կաթով են շաղված.
Այդ կաթի մէջ լիկի-լիցուն
Իր շունչ, հոգին են մտած:

Ուրիշ լեզու քո բերնում
Չի՛ տայ համ, հոտ լսողին,
Թէ՛ հայ է նա համարվում
Հոգով, սրտով լիովին:

Հոգ չէ՛, թէ՛ դանձ կորցրնես,
Քիչ-քիչ նորը կը ճարես.
Իսկ թէ՛ լեզուդ մեռցրնես՝
Տուն ու տեղով կորած ես:

Իմացվել չի, դու ո՞վ ես,
Հայ, ռուս, գերման թէ պարսիկ,
Մինչ քեզ անուն դնում ես՝
Ժօրժիկ, Վիկտօր և Լիւդվիկ:

Բայց թէ կեանքիդ դու անխաբ
 Կուզես տալ մի նպատակ,
 Պատւի՛ր լեզուդ դիւի՛դ չափ,
 Որ չընկնի նա ոտքի տակ:



16. ՈՒՂՂԱԽՍՍՈՒԹԻՒՆ



Ըբ ուղում ես մէկ միտք
 յայտնել
 Քո մայրինի սիրուն լեզուով,
 Միշտ աշխատիր ուղի՛ղ
 խօսել,
 Ճիշտ ու մաքուր և կանոնով:

Ուղիղ ու ճիշտ նա է խօսում,
 Ումից հայ հոտ, համ է գալիս.
 Ըզգում ես՝ բուն հայն է խօսում,
 Խօսքն ու զրոյցը դուր է գալիս:

Կան և այնպէս խօսող հայեր,
 Մարդ կարծում է, թէ հայեր չեն.
 Իրար կողքի շարում խօսքեր,
 Բայց ասածներ հայերէն չեն:

Պատճառն այն է, որ, ասում են՝
 Տան մէջ լսվում չէ՛ հայերէն.
 Ամէն լեզու միշտ խօսում են,
 Հայերէն՝ ոչ, — միլիոններէն *):

*) «Միլիոն» ասում են կրակապաշտներին:

Մաքուր խօսել թէ ուղում ես,
Կարգ ու կանոն միշտ պահպանիր.
Կուտը ցորենից, թէ կարող ես,
Խնամքով հատ-հատ ընտրիր, հանիր:

Անուշադիր երբ ասում ես
Մէկ սիրուն խօսք, մէկ կոպիտ բառ.
Ասածիդ մէջ միշտ խառնում ես
Օտար լեզու, օտար բարբառ,

Խեղճ խօսքերը ծաւրկելով —
Դառնում են ձիշտ մի նահատակ,
Եւ բերնումըդ շատ տանջվելով՝
Ջարդվում, ընկնում են ոտքի տակ:

Օտար լեզուվ թէ մտածես,
Եւ բառերը ձիշտ թարգմանես՝
Խօսած կլինես ոչ հայերէն,
Աստուած գիտէ, թէ ի՞նչերէն:

Պէտք է լսես լաւ խօսողի,
Կարգաս մաքուր լեզուով գրքեր,
Եւ սովորած ամէն խօսքի
Տեղ տաս մտքիդ խոր անկիւններ:

II. ԳՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

17. ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ



ըբ զրում ես դու քո դասեր,
Կամ երկու տող քո ընկերին,
Պէտք է գիտնաս հէշտ կանոններ,
Որ զրածներդ ուղե՛ղ լինին:

Կայ գրա համար մի լաւ օրէնք,
Որ կոչվում է ուղղագրութիւն,
Որի վրայ, ուղենք — չուղենք՝
Պէտք է դարձնենք ուղղորութիւն:

Բայց այդ օրհնած ուղղագրութիւն
Հազար ու մի կանոն ունի.
Ո՛ր մէկի վրայ համբերութիւն
Ունենայ մարդ, որ լաւ սովորի:

Դրա համար դու կը յիշես
Մի քանի հեշտ, որո՛շ կանոն,
Որ երբ գրես, վըրան նայես՝
Ուղե՛ղ լինի, ինչպէս քանոն:

Պէտք է զիտնաս, փափուկ*) չէին
Շատ չէ՝ սիրում մեր նու գիրը.
Սյս պատճառով զրա կողքին
Զգվում է կոշտ բա եղբայրը**):

Աստի, բանել, երբ դու ուզես,
Կամ թէ խառնել որ և է բան,
Ամէն տեղ էլ միշտ կը տեսնես՝
Նուրի կողքին պառկած մեր բան:

Երբ «վո» լսվի բառի սկզբին,
Դիր համարձակ միայն * գիր.
Սյսպէս էլ միշտ վերի կողքին
Շարիր ազատ դարձեալ նոյն գիր:

Որդի, «դնի», «սկոր», «չխար»
Ինչքան ուզես, լի՛ է աշխարհ.
Հով ու զով ծով միշտ նաւելով՝
Լցվում է կուրծք մաքուր օդով:

*) Հին ժամանակ փափուկ «ըը» ու կոշտ «ռը», և մեծ «վը» ու փոքր «ւը» չէին ասում: այլ ասում էին րէ, ոա, վե, հլեն (ւ):

**) Շատութիւն ցոյց տվող բառերի մէջ, երբ վերջաւորութիւնը ներ է՝ նուից առաջ ր է գրվում: Օրինակ. եղբայրներ, կամարներ, հաղարներ...

Ինչ բանից որ երկինք - երկրում
Մէկն է միայն, ոչ աւելի,
Նրա անուան վերջին ծայրում
Զէ՛ նստում յին ողորմելի:

Մարդու անունն էլ քեզ ահա,
Որի վերջը նստած է ա. —
Ղուբա, Զուղա, Ամերիկա,
Աննա, Մարթա և Ովսաննա:

Եւ այն բառեր, ուր հրաման կայ,
Ու կարճ խօսքեր՝ ծայրումը ա,
Յի գրելու կարիք չը կայ,—
Ասա՛, կարդա՛ և սա, դա, նա:

Զայնաւոր գիր իր աջ կողքում
Հէն եղբորն է խիստ շատ սիրում.
Բայց թէ բարդ բառ *) է պատահում,
Մեր վերին է մէջ տեղ բերում:—

*) «Բարդ բառ» այն բառին ենք ասում, որ թէպէտ մէկ բառ է, բայց կազմված է երկու առանձին պարզ բառերից. Օրինակ՝ «արագավազ» բարդ բառը կազմված է «արագ» ու «վազել» բառերից, որոնք միացել են «ա» տառով:

Ձաղ հաւ, ինչքան ասես, ունենք,
Թիւ ու համար, հաշիւ չը կայ.
Աղնիւ՝ ընկեր, թող մորթօտենք,
Քեզնից լաւ հիւր մեր տուն չի գայ:

Արագաձագ, քաջ նաւաձար,
Խեղդովողների՛ ես ազատիչ.
Իսկ մենք ապրենք քաղաքաձար,
Եւ լինենք լաւ կառաձարիչ:

Շատ նեղութիւն տալ չեմ ուզում
Եւ կանոններ շարան-շարան.
Թէ կամք ու սէր կայ քեզանում,
Մի՛շտ կը ճարես դեղ ու դարման:



18. ԵՌՅԱՆՆԵՐԻ ԲԱՌԵՐ



անուշակից սովորաբար
Անուշ, ախորժ հոգ է
զալիս:

Մեր ցուրտ սարը ամէն
ամառ

Ոչխարների հոգ է զալիս:

Ինչ որ կանես՝ արա,
որդի,

Վատ ընկերօջ հե՛տ մի՛ մնայ.

Ինչ որ կանես՝ արա, որդի,

Հաւ ընկերից յե՛տ մի՛ մնայ:

Մենք քաղաքին տալիս ենք հաւի,

Բնակում ենք գետին շատ մօտ.

Մեր տունն ունի չորս բարձր յաւի,

Առատ լոյս և խիստ մաքուր օդ:

էգուց, վաղ-վաղ լուսանալիս
 Ե՛կ, «-խո» գնանք մեր Սուրբ Սարգիս.
 Իսկ եթէ դու շուտ չը զարթնա՝
 Մէկ «-ղո» նստիր, որ մեզ հասնես:

Փողոցների ցեխերն ու աղո
 Ձեն մաքրվում շաբաթներով:
 Ամբոխի մէջ մտած մի ախո
 Ձէ՛ դուրս գալիս տարիներով:

Սիրում եմ ես «էջ ու կարագ,
 Որով լին է վան ու վարագ.
 Թէ իրար հետ «էջ ունենանք,
 Ողջ աշխարհի տէր կը դառնանք:

Այսօր կը տամ, էգուց կը տամ,
 Շատ ասելով՝ անցնում է ժամ.
 Բայց «Մինչև որ չերը Բեջե,
 Մեր «Հիւանդի հողին Բուջե»:



19. Ռ ԵՒ Ր (ՆՄԱՆ ԲԱՌԵՐԻ ՄԷՋ)



ուրութիւնն էլ, կա-
 ղութիւնն էլ՝
 Թէ մարդու մէջ կայ,
 ախո է.
 Այս մէկ տարին, ամե-
 նից էլ
 Խոտն ու գարին շատ
 ախո է:

Անցիր, գնա, մի քիչ առաջ,
 Դու կը տեսնես մի բարձր «ախո.
 Աղբիւր կանցնի աչքիդ առաջ,
 Կարկուտի պէս ջուր ունի «ախո:

Ամէն շաբաթ գիւղ եմ գնում,
 Որ իմանամ մի-երկու լոս.
 Բայց ամենքը իրար նայում,
 Բերան փակած՝ նստում են լոս:

Ամենայն կերպ աշխատում եմ
 Մեր հանդեսում ասել մի հաս,
 Բայց ի՞նչքան էլ մտածում եմ,
 Չեմ գտնում ես սրան մի հաս:

Ո՛ւր որ գնաս այս աշխարհում,
 Լեզուդ, հաւատ պի՛նդ պահպանիր.
 Ծաղկազարդին եկեղեցում,
 Մի կանաչ հոգի ձեռքի՛դ բռնիր:

Երկընթովը շարան-շարան
 Անցնում էր շտապ մի խումբ հոգի-
 Դուրս վաղեցի՛ տեսնել նրան՝
 Քարի դիպաւ ոտքիս հոգի-նի:

Շատ ենք հեռու, հա՛տի՛վ եկէք,
 Խառը չը դաք, հա՛տի՛վ եկէք:
 Մեր պարտեզում մի հոգի կայ.
 Այն ուղիւ թող այնտեղ դայ:

Երբ փող ունեմ, ես, ի հարկէ,
 Իմ տան վարձը վճարում եմ.
 Բայց թէ չունեմ, երբ իմ պարտքն է՝
 Տան իրերըս վճարում եմ:

20. «Ռ» ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐ



Կողմ ագրաւ՝ լի է
 անտառ.

Գոգող ախլաճ փշրեց
 մացառ:

Նա գոգում է առանց պատճառ,
 Անմեղ դաւը՝ լալիս թշուառ:

Այս առաւօտ շատ էր պայծառ,
 Ծիծեհնակը ճիւղողում էր.
 Կը մնայ մեղ մօտ ամողջ ամառ,
 Ու կը թռչի հեռու տեղեր:

Պառաւ տատըս, ժայռին նստած՝
 Մէկ համառօտ ասեց առած.
 Բայց նա պատմեց Լ՝ մէկ առակ,
 Որով արեց մեղ խայտառակ:

Ես դեռ լիւր չեմ գնացել
Ո՛չ էլ կաքով առաւ անցել
Մաքայիլ եմ ամառ ձմեռ,
Ախոս, մառան մաքուր աւելի:

Արևի վառ ճառագայթներ
Պատարում են մայլ երկինք.
Հալածում են մառախուղներ,
Շուտով բացվում ծառ ու ծաղիկ:

Անգործ պառկել ու հառաչել
Ո՛չինչ շնորհք չէ՛ առանձին.
Քառսուն տարի եմ ծառայել,
Չեմ թափաւել ամենևին:



21. ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿ*)

Ի.



Խո՞նս, արդեօք, խելօք մանկիկ,
Որ մեր սրտում քնքշիկ կերպով
Նստած է մի սիրուն աղջիկ՝
Ոտքից՝ գլուխ ճերմակ շորով:

Բայց այդ շորեր այդպէս մա-
քուր

Չե՛ն լինում միշտ և ամէն օր.
Այլ շատ անգամ դիպչում է մուր,
Աղտոտում է ըզգեստ բոլոր:

Երբ օգնութիւն ենք հասցընում
Մեր թշնամուն նոյն իսկ՝ յաճախ,
Փոքրիկ աղջիկն իսկոյն սրտում
Թռչկոտում է ուրախ - ուրախ:

*) Այս ոտանաւորը յօրինել եմ մի ուսուցչին արձակ
գրուածքից. Վերջին տունը իմ աւելացրածն է:

Բայց երբ մէկին փնաս տալով,
Զրկում ենք իր ունեցածից՝



Աղջիկն այն ժամ խորին վշտով
Արցունք թափում է աչքերից:

Ինչպէս չը լայ, երբ վատ դործից
Սէ բիծ է միշտ ընկնում շորին.
Այնպէս ցեխոտ, այնպէս մի բիծ,
Լվանալն է անհրնարին:

Փայլուն շորեր շատ մարդու մէջ
Վաղճւց կորել են կեղտի մէջ.
Միջի աղջիկն էլ անման՝
Պառկած է խոր քնով մահուան:

II.

Հիմա ես քեզ կը պատմեմ այն,
Թէ ինչ արեց մեր չար Լէոն,
Որ մի տղայ էր՝ ճակատը լայն,
Եւ չէր հարցնում նա իմն ու քոն:

Զմեռ օրով կտրին կանգնած՝
Անցորդների գլխին, մէջքին
Գունդ էր նետում՝ ձիւնից շինած,
Զվարճանում թունդ ցրտերին:

Երբ տեսնում էր սայլապանին՝
Մեծում է իր յոգնած ձիուն,

«Խփիր, կասէր, հանիր հողին,
Թող խելքի դայ, վաղէ սիրուն»:



Հաւ կը լինէր, որ հէնց քեզ
էլ
Ռէխիդ հասցնէր, չոր սայ-
լապան,
Կը խնդայինք սրտանց մենք
էլ

Կը տեսնէինք լաւ տեսարան»:



Երբ տեսնում էր մնացործին,
Սուր դանակը քսում է յանկարծ
Խեղձ, անլեզու գառան վըզին,
Եւ արիւնը, առատ թափված՝

Կարմիր ներկում, դառնում է լիճ,—
«Այդպէս, կասէր, և քեզ համար
Կը դայ ժամը, անսիրտ դահիճ,
Թող վերջանայ բոլոր աշխարհ»:

Երբ տեսնում էր մի փոքրիկ շուն,
Սրէի տակ, աչքը փակած՝
Քարկոծում էր խեղձ կենդանուն,
Դունչ ու պռունդին տալով հարուած:

Եւ երբ նրա ձայնը ցաւոտ
Մեծ փողոցի ծայրն էր հասնում,
«Այդպէս կերգես, կասէր, լակոտ,
Ի՞նչ ես շնթուել այս տաք տեղում»:

Այսպէս ահա, Լէոնը չար
Սմէնքին էլ նեղացնում էր.
Ուստի մարդիկ քաղաքավար
Թափում էին, ինչպէս հարկն էր:

Եւ մեր Լէոն, այդ գիժ աղայ,
Երբ որ մարդիկ սաստիկ ցրտում
Զլըխկում էին սառցի վըրայ՝
«Օխայ» ասէր և ծիծաղում:

III.

Սյգպիսի մէկ եղանակին,
Եկեղեցուց նոր դուրս եկած,
Ծերուկ Վարդան փռվեց գետնին,
Գլխով դիպաւ քարին յանկարծ:

«Ի՞նչ պատահեց, ծերուկ ուժեղ,—
Ասեց Լէոն, ծիծաղելով,—
Ո՞վ կը ապ քեզ այդքան մեծ տեղ,
Որ բռնել ես երկու ձեռքով»:

Ծեր Վարդանը փորձեց կանգնել,
Որ արդէն նրան քիչ աջողվեց.
Բայց հէնց նոր էր նա կանգ առել՝
Սահեց օտքը, կրկին փռվեց:

Իսկ չար Լէոն միշտ ծաղրում էր.
«Պապի՛կ, արդէն թաւալվում ես.—

«Արբած է դա» մարդիկ կասեն.
Բանտ կը տանեն, իմանում ես»:

Երկար տանջվեց մեր խեղճ ծերուկ,
Ու վերջապէս ուժից ընկաւ.
Աղի-աղի ու տաք արցունք
Թափում էր նա գետնին խոնաւ:

«Վըրաս նայող մէկը չը կայ,
Հասել է և իմ ժամանակ.
Ա՛ստուած, ասեց, էլ ուժ չը կայ,
Թող պառկե՛մ ես սե հողի տակ»:

Իսկ անցորդներ, հեռանալով՝
«Մեր ծերուկը լաւ է կոնծել *),—
Ասում էին, վրան նայելով,—
Լուսանալուն չէ՛ ըսպասել»:

Կահուղ ձիւնն էլ փաթիլ-փաթիլ
Ծածկում էր մեր խեղճ ծերուկին.
Եւ մէկ-մէկ էլ կաթիլ-կաթիլ
Իջնում նրա սառած գլխին:

*) Կոնծել նշանակում է՝ գինի կամ օղի կուլ գցել:

«Էյ, պապիկ դու, տղան կանչեց,—
Կը սառչես շուտ, այ խուլ պառաւ»:
— «Վեր կացրու դրան» սիրտը ասեց:
— «Զեմ վեր կացնի» ջուղաբ*) առաւ:

Ծերունին շատ ծանր էր շնչում.
Իսկ մարդիկ, նրան հանդիպելով՝
Սառ նայում էին ու հեռանում,
Զը դիպչելով խեղճին մատով:

«Տես անպիտան այս շներին,—
Ասեց Լէոն, բարկանալով.—
Ձեռքները խի՞ստ կը կտաքըտովին,
Թէ վեր կացնեն սրան շուտով»:

Նա խոնարհեց, սառած մարդուն
Վեր բարձրացրեց բոլոր ուժով:
«Պի՛նդ բռնիր ինձ, այ խեղճ ծերուկ»
Ասում էր նա, սառ-սըհելով:

*) «Ջուղաբ» թիւրքերէն բառ է. նշանակում է՝ պատասխան: «Ջուղաբ առաւ» նշանակում է՝ «պատասխան ստացաւ»:

Նա կանգնեցրեց Վարդան պապին,
Տւեց ձեռքը իր գաւազան.
Դլխարկն առաւ, ծածկեց գլխին՝
Դէպի իր տուն տարաւ նրան:

«Ապրես, որդեակ, դառնաս իմ տարս»
Ծերունին ասեց, տաք օրհնելով.
Լռեց Լէոն, ինչպէս մի հարս,
Ու դուրս վազեց, կարմրելով:

«Յրտիցն է այս» նա ասում էր,
Շունչ էր քաշում ծանր կերպով.
Դէս-դէն ընկնում, օրօրվում էր,
Պատահածը չիմանալով:

Բայց նա յանկարծ շատ պարզ ըզզաց,
Փոքրիկ աղջկն ինչպէս սրտում
Վեր-վեր ցատքեց, ուրախ խաղաց,
Թռչնիկի պէս, զարթած՝ բնում:

Ցատքեց աղջիկ Լէոնի մէջ,
Ուրախ արցունք թափեց աչքից.

Քնքշիկ ժրպտաց այդ լացի մէջ,

Տղի խելքը տարաւ
զլիւից:

Փայտի սիւնին Լէօն
յենւկեց,
Բռնեց զլուխը երկու
ձեռքով,
Այնպէս յանկարծ և
պինդ լացեց,
Տարածվեց ձայն ողջ
փողոցով:

«Լացի՛ր, լացի՛ր —
սիւնը ասեց —
Դու իրաւունք ունես
լալու.
Քո արած զործ բարձր
հընչեց,
Խօսք չեմ
զտնում՝
քեզ գովե-
լու»:



«Լացի՛ր, Լէօն, ասեց արև,
Որ վառվում էր զլիւի վերև,—
Կը ցամքեցնեմ քո արցունքներ,
Ուրախ են և՛ լուսին, աստղեր»:

«Լացի՛ր, ասեց զետին սառած,—
Սո՛ւրբ են քո այդ արտասուքներ»:
Իսկ աղջիկը՝ ուրախացած՝
Երգ էր երգում մեղմիկ ձայնով:

«Մի՛ թըռչկոտար — տղան ասէր,
Սրտատեղը պինդ սեղմելով.—
Իմ արածը չնչին բան էր,
Մի՛ ցատքըտիր, այն տեսնելով:

Գիտե՞ս, ասեց բարկանալով,
Իմ արածը թող մո՛լթ մնայ.
Որ լինեմ ես հանդիստ հոգով՝
Ձե՛մ ուզում, որ մէ՛կն իմանայ»:

Այդ աղջիկն է միշտ, ամէն օր
Դատում արդար ու մեղաւոր.
Կարէ՛ք ասել՝ նա ի՛նչն է մեր,
Որ քննում է մեր արածներ:



ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԱԴՈՐ ՎԱՏԱԿՆԵՐԸ

Ա. Դասագրքերը.

1. Ընտիր Հատուածներ, Ա. մաս — արձակ, չորրորդ տիպ, 475 էջ, Գինը է 1 ռ.:
2. Ընտիր Հատուածներ, Բ. մաս — Բանաստեղծութիւններ, ա. տիպ, 476 էջ, Գինը՝ 1 ռ. 25 կօպ.:
3. Հայոց լեզուի ուսուցիչ, Դ. տարի, չորրորդ տիպ, 312 էջ, Գինը՝ 60 կօպ.:
4. Հայոց լեզուի ուսուցիչ, Գ. տարի, չորրորդ տիպ, 142 էջ, Գինը՝ 40 կօպ.:
5. Հայոց լեզուի ուսուցիչ, Բ. տարի, երկրորդ տիպ, 144 էջ, Գինը՝ 35 կօպ.:
6. Համառոտ Քերականութիւն, Ա. մաս — Նախադասութիւններ և Մասունք Բանի, 54 էջ, Գինը՝ 20 կօպ.:

Բ. Կրօնական զրուածքները.

7. Յիսուս Քրիստոսի Մկրտութիւնը, 36 էջ, Գինը՝ 8 կօպ.:
8. Չարչարանքի շաբաթը, (վեց պատկերով), Գինը՝ 15 կ.:
9. Պարզ Քարոզներ, Ա., 75 էջ, Գինը՝ 15 կօպէկ.:
10. Պարզ Քարոզներ, Բ., 92 էջ, երկ. տիպ, Գինը՝ 15 կ.:
11. Պարզ Քարոզներ, Գ., 120 էջ, Գինը՝ 20 կօպէկ.:
12. Պարզ Քարոզներ, Դ., 110 էջ, Գինը՝ 20 կօպէկ.:

Գ. Այլ և այլ զրուածքները.

13. Հայոց Առաջին Ընդհանուր Ուսուցչական Ժողովի Պատմութիւնը, 170 էջ, Գինը՝ 50 կօպէկ.:
14. Նախապաշարմունք, Հատոր Ա., 84 էջ, Գինը՝ 50 կօպ.:
15. Անեկդոտներ, Հատոր Ա., 223 էջ, Գինը՝ 50 կօպէկ.:
16. Անեկդոտներ, Հատոր Բ., 153 էջ, Գինը՝ 50 կօպէկ.:
17. Անեկդոտներ, Հատոր Գ., 250 էջ, Գինը՝ 50 կօպէկ.:
18. Պօլուիմպէրիալ, (Մանկ. պիէս) 42 էջ, Գինը՝ 20 կ.:
19. Երկու Տօնածառ, 24 էջ, Գինը՝ 20 կօպէկ.:
20. Օրացոյց (ընդարձակ յաւելուածով), 1887—1895.
21. Ոտանաւորներ (երեխաների համար), 1903, Գինը՝ 50 կ.:

Հեղինակի հասցէն. Москва, Свящ. Э. Назарьянцъ.

Երես.

9. Ես սիրում եմ լուսնեակ՝

(Պէտք է լինէր՝)

Ես սիրում եմ պարզ լուսնեակ՝

40. Ի՞նչ կը լինի Գո սուրբ օրհնանք»:

Ի՞նչ կը լինի Գո սուրբ օրհնէնք»:

19. Ծառերի ձիւղ, ոստ՛ին փռում,

(Նշանակում է՝)

Ծառերի ձիւղ, ոստ էին փռում,

39. Քուն՛ին մտնում, մտածելով՝

Քուն էին մտնում, մտածելով՝

21. Գերեզմաննիդ օրհնել պիտ՝ տամ:

Գերեզմաններդ (Ձեր գերեզմանները) օրհնել պիտի տամ:

25. Մէր Հայր, որ է՛ն բարձրումն ես,

Մէր Հայր, որ ամենաբարձր տեղումն ես,

— Գ Ի Ն Ն Է —

ԱՌԱՅ ԿԱԶՄԻ — 50 ԿՕՊԵԿ. ԿԱԶՄՈՎ — 75 ԿՕՊԵԿ:

Հեղինակին զիմողները ճանապարհածախս չեն վճարում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0399941

11711

